ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

863 թ. բյուզանդական հայազգի զորավար Պետրոնասը Պոսոն վայրում ջախջախեց Մելիտենեի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի ղեկավարած արաբական զորքերը[1]։ Դրանով իսկ արաբների դեմ մղված դարավոր պայքարում նախաձեռնությունն անցավ բյուզանդացիներին։ «Հայկական հարցը», եթե կարելի է այդպես արտահայտվել, Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականության մեջ երկդարյա քնից հետո նորից հրապարակ եկավ։ Բյուզանդիան ամեն կերպ աշխատում էր նորից իրեն ենթարկել այդ երկիրը և իր նպատակին հասնելու համար գործի էր դնում ոչ միայն իր ռազմական ուժերն ու փորձված դիվանագիտությունը, այլև ջանք էր թափում իր ոտնձգությունները հիմնավորել նաև «պատմականորեն»։

Վասիլ Ա Մակեդոնացի կայսրը իրեն Արշակունի հռչակեց[2], թեև նրա երակներում արշակունի արյան մեկ կաթիլ անգամ չկար։ Վասիլը, դիմելով այդ քայլին, նպատակ ուներ ոչ միայն քողարկել իր հասարակ ծագումը, օրինականացնել իր իրավունքները բյուզանդական գահի նկատմամբ։ Նա ուներ շատ հեռուները գնացող նպատակներ, այն է՝ Հայաստանը վասալական կախման մեջ գցել։

Հայաստանում Արշակունիների հարստության գոյության ժամանակ հայկական բոլոր նախարարությունները իշխող հարստության վասալներն էին, այդ թվում և IX դարում անկախություն ձեռք բերած և իրենց իշխանությունները հռչակած Բագրատունիները, Արծրունիները, Անձևացիք, Սյունիները և այլն։ Իրեն Արշակունի համարելով, հասկանալի է, Վասիլ Ա-ը հանդես էր գալիս որպես բոլոր վերոհիշյալների սյուզերենը, ցանկանում de jure իրեն ենթարկել Հայաստանը։ Այդ բանը հաստատվում է և Բյուզանդական կայսրության արտաքին գործոց նախարարության դրասենյակում թխված մի «տեսությամբ», համաձայն որի պարթևների Արշակ արքայի քաջության և ձեռք բերած փառքի պատճառով իբրև թե օրենք դարձավ, որ նրա մահից հետո պարթևների, մարերի և հայերի վրա թագավորեն բացարձակապես Արշակունիների շառավիղները[3]։ Նպատակը պարզ է. քանի որ Վասիլ Ա-ը «Արշակունի» է, ապա այդ «օրենքի» համաձայն նա, ի միջի այլոց, պետք է թագավորի նաև հայերի վրա։ Ինչպես տեսնում ենք, կեղծիքը բավականին սրամիտ է։

Բայց, հասկանալի է, երկդարյա ստրկությունից հետո հազիվ անկախություն նվաճած հայերի համար այդ «տեսություններն» ու «օրենքները» ոչ մի լավ բան չէին կանխագուշակում։ Նրանք, հազիվ մեկի լուծը թոթափած, ամե-

---

[1] Theophanes Continuatus, Bonnae, 1838, էջ 183։

[2] Նույն տեղում, էջ 212։

[3] Նույն տեղում, էջ 212—213։

նևին էլ չէին ուզում ընկնել մի ուրիշի լծի տակ, թեկուզ և քրիստոնյա պետության։ Նրանք ամեն կերպ ջանք էին թափում ընդդիմակայել բյուզանդական նվաճողական քաղաքականությանը։

Բյուզանդիայի դեպի Հայաստան առաջխաղացման առաջին խոչընդոտը պավլիկյաններն էին։ Երկարատև և արյունահեղ պայքարից հետո կայսրությանն ի վերջո հաջողվում է 879 թ. վերջնականապես պարտության մատնել աղանդավորներին[4]։ Բայց պավլիկյանների քաղաքական և ռազմական ջախջախումը դեռ չէր նշանակում նրանց ֆիզիկական կործանումը։ Աղանդավորների մի մասին, ըստ երևույթին, հաջողվեց ապաստան գտնել իրենց վաղեմի դաշնակից արաբների մոտ։ Այդ առնչությամբ պետք է ավելի ուշադիր ուսումնասիրել Վասիլ Ա-ի հաջորդ Լևոն Զ-ի ժամանակ պավլիկյանների կենտրոններ Տեֆրիկեի և Արգաուսի (Արգովանի) մոտիկ, բայց արաբական տիրապետության տակ գտնվող շրջաններում հայազգի մի շարք գործիչների խաղացած ռազմական և քաղաքական դերը։ Խոսքը Մելիտենեի շրջանում գործած Մելիասի (Մլեհի), Վասակ, Գրիգորիկ և Պաղուն եղբայրների և Իսմայիլ-հայի մասին է, ինչպես և Չորրորդ Հայքի Դեգիկ վայրում գործած Մանվելի և նրա որդիներ Պանգրատուկասի, Յախնուկասի, Մուդաֆարի և Հովհաննեսի։

Դժվար չէ համոզվել, որ նրանք բոլորը Չորրորդ Հայքի և Մելիտենեի բնիկներ չեն, թեև Կոստանդին Ծիրանածինը նրանց այնտեղ է հիշատակում[5]։ Դեռ ավելին, նրանք հայ նախարարական կամ իշխանական տների ներկայացուցիչներ էլ չեն։ Նրանց անունների մեծամասնությունը դրա վկայությունն է։ Իսկ երբ ի վերա ամենայնի հիշենք Կոստանդին Ծիրանածինի խոսքերն այն մասին, թե Մելիասը «դեռ փախստական էր Մելիտենեում»[6], պարզ կդառնա, որ նա արաբների մոտ է փախել, պավլիկյանների դաշնակից Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի քաղաքը, Բյուզանդիայից։ Հիմքեր կան ենթադրելու, որ Մելիասից բացի Մելիտենեի արաբների մոտ և Չորրորդ Հայք փախան և վերևում հիշատակված Վասակը, Գրիգորիկը, Պաղունը, Իսմայիլը, Պանգրատուկասը, Յախնուկասը, Մուդաֆարը և Հովհաննեսը։

Պատահա՞կան էր արդյոք նրանց փախուստը Բյուզանդիայից դեպի պավլիկյանների կենտրոնից ոչ շատ հեռու ընկած այս շրջանները։ Ըստ երևույթին, ոչ։ Լևոն Զ-ի թագավորության ժամանակ նրանք որոշում են վերադառնալ Բյուզանդիա, հետևաբար նրանք սպասում էին նախորդ կայսեր վախճանին, իսկ նա Վասիլ Ա-ն էր, պավլիկյանների երդվյալ թշնամին։ Մենք ճշմարտությունից հեռու չենք լինի, եթե ենթադրենք, որ նրանց՝ արաբների մոտ փախչելու պատճառը Վասիլ Ա-ի հալածանքներն էին, իսկ Վասիլ Ա-ը հենց պավլիկյաններին էր հալածում։ Մեր ենթադրության օգտին է խոսում թե՛ այն հանգամանքը, որ և՛ Մելիտենեն, և՛ Չորրորդ Հայքը գտնվում էին հենց պավլիկյանների նախկին հանրապետությանը կից, այլև այն, որ Մելիասը համաձայնվեց Լևոն Զ-ի ժամանակ վերադառնալ Բյուզանդիա այն պայմանով միայն, որ ին-

---

[4] M. Canard, Note..., „Revue des Études Arméniennes", t. IV, 1967, էջ 405։

[5] De Administrando Imperio, ed. Gy. Moravcsik, Budapest, 1949, էջ 238։

[6] Նույն տեղում։ Այստեղ ավելորդ չէ նշել, որ նրանք նախքան Բյուզանդիա անցնելը խարսիանոն բանակաթեմի զորավար Եվստաթիոս Արգիրոսից գրավոր երաշխավորագիր պահանջեցին, որ Բյուզանդիայում կստանան տիրույթներ և կառավարման համար շրջաններ։

քը կդառնա Եփրատիա շրջանի կլեյսուրարխը, իսկ Եփրատիան ոչ այլ ինչ է, քան մոտիկ անցյալում հենց պավլիկյաններին պատկանող Տեֆրիկեի շրջանը[7]։

Չորրորդ Հայքը և Մելիտենեն դեռ Ֆիլիպպիկոս-Վարդանի ժամանակ (711—713 թթ.) պավլիկյանների համար ապաստարան էր[8]։ Դրանից քառասուն տարի անց Կոստանդին Ե Կոպրոնիմոսը հենց Մելիտենեից պավլիկյաններին դաղթեցրեց Թրակիա[9]։ IX դարի սկզբում հենց Մելիտենեում ապաստան գտավ պավլիկյանների խոշորագույն աղանդապետ Սերգիոսը իր հետևորդների հոծ դանգվածներով[10], Եվ վերջապես Մելիտենեում ապաստանեց պավլիկյանների ռազմական ղեկավար նշանավոր Կարբեասը (մահացել է 863 թ.) հինգ հազար պավլիկյաններով[11]։ Այդ լույսի տակ իմաստ են ստանում նաև բյուզանդական պատմիչ Գենեսիոսի խոսքերն այն մասին, որ IX դարի 70-ական թթ. սկզբում փրկված պավլիկյանները ապաստան գտան Ասորիքում[12]։

Հայտնի է, որ Վասիլ Ա-ի մահից հետո նրա որդի Լևոն Զ-ը փոխեց իր հոր քաղաքականությունը պավլիկյանների նկատմամբ։ Նա դեմ չէր ռազմունակ աղանդավորներին օգտագործելու իր նպատակների համար։ Պատահական չէ, որ Լևոն Զ-ը պավլիկյանների առաջնորդ Խրիսոքիրի թիկնապահ Դիակոնիցեսին մենսուրատորի աստիճան տվեց և պավլիկյաններից բաղկացած զորամասով Իտալիա ուղարկեց կայսրության թշնամիների դեմ[13]։ Ըստ երևույթին նա այդպես վարվեց նաև վերոհիշյալ հայերի նկատմամբ, այն տարբերությամբ միայն, որ նրանց արևմուտք չուղարկեց, այլ թողեց արևելքում, ըստ կնքված համաձայնության, և նրանց օգնությամբ նվաճեց նորանոր հայկական հողեր։ Այդ առնչությամբ հետաքրքրական է նշել, որ թեև վերոհիշյալ հայ գործիչները կառավարման համար ստացան մի շարք քաղաքներ ու գավառներ Բյուզանդիայում, այնուամենայնիվ շատ շուտով, տարբեր պատճառաբանություններով զրկվեցին դրանցից։ Վասակն, օրինակ, աքսորվեց «դավաճանելու նպատակ» ունենալու մեղադրանքով։ Բոլոր նշված հայերից միմիայն Մելիասն է, որ այնուհետև հիշվում է աղբյուրներում։

Ամրանալով այստեղ, Բյուզանդական կայսրությունը ջանք էր թափում շարժվել առաջ։ Օրակարգում էր Թեոդոսուպոլիս-Կարինի հարցը, քաղաք, որ գտնվում էր արաբ ամիրաների ձեռքում։ Քաղաքին տիրանալու համար Բյուզանդիային անհրաժեշտ էր Կեցեոն կոչված բերդը, որը սակայն վրացիների ձեռքում էր գտնվում։ Հակառակ կայսրության բոլոր խոստումներին, թե Թեոդոսուպոլսի գրավումից հետո Կեցեոնը կվերադարձվի վրացիներին, վերջիններս ոչ մի կերպ այն չզիջեցին կայսրությանը[14]։ Հետաքրքրական է նշել, որ Թեոդոսուպոլսի գրավման դեմ էին և՛ հայերը, և՛ վրացիները։ Նրանք երկուսն էլ նախընտրում էին, որ քաղաքը մնա արաբների ձեռքում, քան թե անցնի

---

[7] Տե՛ս Է. Հոնիգմանի 960 թ. քարտեզը Նրա՝ Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, աշխատության մեջ։

[8] Р. Бартикян, К вопросу о павликианском движении в Византии в первой половине VIII в., „Византийский временник", т. VIII, 1956.

[9] Theophanis Chronographia, ed. C. de Boor, Lipsiae, 1883, t. II, էջ 429։

[10] Petri Siculi Historia Manichaeorum, Migne, Patrologia graeca, t. 104, cap. XLI.

[11] Theophanes Continuatus, էջ 166—167; Petri Siculi, cap. XLII.

[12] Genesii Regum, էջ 121։

[13] Theophanes Continuatus, էջ 313; Genesii Regum, էջ 125։

[14] De Administrando Imperio, էջ 208։

կայսրությանը։ Հարցն այն է, որ արաբները նրանց համար լուրջ վտանգ չէին ներկայացնում արդեն, իսկ Բյուզանդիայի նպատակները բազմադարյան դառն փորձից հայտնի էին։ Հայերի և վրացիների համար ավելի ձեռնտու էր իրենց և Բյուզանդիայի միջև ունենալ այնպիսի մի քաղաքական միավորում, ինչպիսին էր Թեոդոսուպոլսի ամիրայությունը։ Բայց հայերի և վրացիների դիմադրությունը երկար չտևեց։ Ի վերջո, 949 թ. Բյուզանդիային հաջողվեց գրավել քաղաքը և ընդլայնել իր նվաճողական քաղաքականությունը դեպի արևելք և հարավ-արևելք։ Հերթը հասավ Տարոնին։

Տարոնի հայկական իշխանությունը[15] հիմնադրվել էր IX դարի առաջին կեսին։ Հնում Տարոնը պատկանում էր Մամիկոնյանների նախարարական տանը, բայց VIII դարի ընթացքում աստիճանաբար անցավ Բագրատունիների ձեռքը։ Տարոնի իշխանության հիմնադիրն էր իշխան Բագարատը։

Տարոնի իշխանության դրությունը հենց սկզբից շատ բարդ էր և դժվարին։ Գտնվելով Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայության միջև, նա հսկայական ճիգեր էր գործադրում պաշտպանելու համար իր անկախությունն ու ամբողջականությունը։ Այդ բանը որոշ հաջողությամբ էր պսակվում շնորհիվ Տարոնի իշխանների հեռատես քաղաքականության։ Կոստանդին Ծիրանածինը պարզ գրում է, որ Տարոնի իշխան Գրիգորը բյուզանդական կայսեր բարեկամն էր խոսքով միայն, բայց գործով խալիֆային էր աջակցում։ Նա հաճախ ուղեցույցի դեր էր խաղում արաբական այն զորքերի համար, որոնք կայսրության վրա արշավանքներ էին գործում։ Նա բյուզանդացիների գաղտնի ծրագրերը հայտնում էր սարակինոսներին[16]։

Տարոնի իշխանության մեջ պակաս դժվարություններ չէին ներկայացնում ներքին անհամերաշխությունն ու պայքարը, որ հրահրում և օգտագործում էր կայսրությունը։ Բյուզանդիան նախ և առաջ ջանք էր թափում ստիպել Տարոնի իշխան Գրիգորին խզելու իր կապերը խալիֆայության հետ։ Ի վերջո այդ բանը նրան հաջողվեց։ Իշխան Գրիգորը Լևոն Զ կայսեր ժամանակ ստացավ մագիստրոսի բարձր տիտղոսը և Տարոնի զորավարի կոչումը։ Դա պարզ ապացույցն էր այն բանի, որ Տարոնը ոչ միայն խզել է իր կապերը արաբական խալիֆայությունից, այլև որ նա Բյուզանդիայի կողմից վասալական կախման մեջ է ընկել։

Տարոնում իր ազդեցությունը տարածելու համար Բյուզանդական կայսրությունն օգտագործում էր Բյուզանդիայում ծառայող հայազգի գործիչներին, որոնցից հայտնի են դրոմոսի խարտուլար Սինուտը, թարգմաններ Թեոդորոսը և Կրինիտեսը, պրոտոսպաթար Կոստանդինը և ուրիշներ։ Փոքր դեր չխաղացին նաև խնամիական կապերը։ Լևոն Զ-ր իշխան Գրիգորի ավագ որդի Բագարատին կնության տվեց մագիստրոս Թեոփիլակտոսի քրոջը, Գրիգորի եղբայր

---

[15] Տարոնի մասին տե՛ս M. Brosset, Collection d'historiens armeniens, t. I Appendice II, Sur le Taron et des Taronites, էջ 613 sqq., S. Pétersbourg, 1874; J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930; N. Adontz, Les Taronites en Armenie et a Byzance, Études Arméno-Byzantines, Lisbonne, 1965, էջ 197—263; Idem, Observations sur la généalogie des Taronites, Reponse au R. P. V. Laurent, Byzantion, t. XIV (1938), fasc. 2, էջ 407—413; V. Laurent, Alliances et filiations des premiers Taronites, princes armeniens médiatisés, Échos d'Orient, t. 37 (1938), էջ 127—135.

[16] De Administrando Imperio, էջ 188։

Ապոգանեմին՝ պրոտոսպաթար Կոստանդնի դստերը։ Սակայն Բյուզանդիայի համար քիչ էր Տարոնի վասալական կախումը միայն, նրան անհրաժեշտ էր Տարոնի կատարյալ նվաճումը, քանի որ իրեն հենակետ էր պետք նորանոր նվաճումների համար Հայաստանում։ Գրիգոր իշխանի մահից հետո Տարոնը բաժանվեց մի կողմից վերջինիս որդիներ Բագարատի և Աշոտի և մյուս կողմից՝ Ապոգանեմի որդի Թոռնիկի միջև։ Նրանց միջև սուր պայքար առաջացավ, որն ավարտվեց նրանով, որ Թոռնիկն ստիպվեց իր բաժինը «կտակել» կայսրությանը։ Տարոնի նվաճումը արդեն մեծ դժվարությունների հետ կապված չէր։ Իշխան Աշոտը նույնպես իր բաժինը «կտակեց» Բյուզանդիային, և նրա մահից հետո, 966 թ. Տարոնի նվաճումն ավարտվեց։

Թե ինչքանով էին այս «կտակումները» «կամավոր», վկայում է այն փաստը, որ տասը տարի անց, երբ Վարդաս Սկլերոսը ապստամբություն բարձրացրեց կայսեր դեմ, առաջինը նրա կողմն անցան Տարոնի իշխան Աշոտի որդիներ Գրիգորն ու Բագարատը, ըստ երևույթին իրենց կորցրած տիրույթներին վերստին տիրանալու հույսով։

Ամրանալով Տարոնում, Բյուզանդիան սկսեց արաբ ամիրաների ձեռքում գտնվող Հայաստանի մի շարք շրջանների նվաճումը։ Արդեն 968 թ. կայսրությունը գրավեց Ապահունիքի կենտրոն Մանազկերտ քաղաքը։

Երկրի գլխին կախված վտանգի առաջ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց։ Հովհաննես Չմշկիկ կայսրը (969—976 թթ.) ծրագրել էր Հայաստանի վրայով արաբների դեմ արշավանքի դուրս գալ։ Հայերը, գիտենալով, թե ինչով կարող է դա վերջանալ, Աշոտ Գ-ի գլխավորությամբ կայսրին կանգնեցրին Հարք գավառում[17]։ Աշոտ Գ-ին միացան Աղվանքի և Վասպուրականի թագավորները, ինչպես և Կարսի, Անձևացյաց, Սյունիքի և Սասունի իշխանները։ Թեև այստեղ որևէ ռազմական ընդհարում տեղի չունեցավ, բայց եթե նկատի ունենանք բյուզանդական կին պատմիչ Աննա Կոմնենայի տվյալները, ապա կասկած չի կարող լինել, որ հայերը Հովհաննես Չմշկիկին մի այլ տեղում զինված դիմադրություն ցույց տվին։ Աննա Կոմնենան գրում է, որ Հովհաննես Չմշկիկը «Խալիբներից և Արմենիական վայրերից» Թրակիա գաղթեցրեց հայ-պավլիկյանների, որոնց նախապես պատերազմում հաղթել էր և զենքով տիրացել նրանց բերդերին և ամրացված տեղերին[18]։ Հասկանալի է, որ պավլիկյան շարժման ջախջախումից հարյուր տարի անց պավլիկյանները հազիվ թե կարող էին գոյություն ունենալ և, առավել ևս, տիրելով բերդերի, զինված դիմադրություն ցուցաբերել կայսեր։ Աննա Կոմնենայի պավլիկյանները ամենայն հավանականությամբ թոնդրակեցիներն են, հենց նրանք էին զինված դիմադրում բյուզանդական կայսրին[19]։

Բյուզանդիայի առաջխաղացմանը դեպի Հայաստան դիմադրություն էր ցույց տալիս նաև Տայքի կյուրապաղատ Դավիթը։ Եթե նա Վասիլ Բ կայսեր թագավորության առաջին տարում ընդառաջեց նրան, խաբվելով նրա խոստումից, թե կստանա «զխաղտոյառիճ Կղէսուրաւն, զՁորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս... որպէս զի զօր առա-

17 Տե՛ս «Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 17։

18 Anna Comnena, Alexias, Migne, Patrologia graeca, t. 131, col 1097.

19 Տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը ըստ հին բուլղարերեն մի ձեռագրի, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 1, էջ 89։

քեսցէ յօգնականութիւն նմա»[20] և օգնեց նրան Վարդաս Սկլերոսի ապստամբությունը ճնշելու գործում, ապա տասը տարի անց, երբ կայսրության ծրագրերը նրան պարզ դարձան, ստիպված եղավ միանալ Վարդաս Փոկասի ապստամբությանը՝ ընդդեմ նույն կայսեր։ Բայց Փոկասի պարտությունից հետո, վախենալով Վասիլ Բ-ի հաշվեհարդարից, Դավիթ կյուրապաղատը նույնպես ստիպվեց իր տիրույթները «կտակել» կայսեր։ 1000 թ., նրա մահից հետո (ավելի ճիշտ՝ սպանությունից[21], նրա մահն արագացրին, հավանաբար, բյուզանդացիները, որոնք շտապում էին ստանալ «իրենց ժառանգությունը») Վասիլ Բ-ը տիրացավ Տայքին։

Վասիլ Բ-ը Ստեփանոս Ասողիկի տվյալներով «զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա, և զմնացեալ ազատսն Տայոց առաւ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհն Յունաց»[22]։

Նույնպիսի «ժառանգություն» թողեց Վասիլին 1021 թ. նաև Վասպուրականի թագավոր Սենեքերիմը։ Ի վիճակի չլինելով ընդդիմակայել բյուզանդական ճնշմանը՝ արևմուտքից և սելջուկյան ասպատակություններին՝ արևելքից և հարավից, նա լքեց Վասպուրականը և, ստանալով մագիստրոսի տիտղոսը, հաստատվեց Սեբաստիայում։ Բյուզանդիան Վասպուրականում ստացավ 72 բերդ, 4.000 գյուղ և 8 քաղաք[23]։

Նվաճված հայկական շրջաններում Բյուզանդական կայսրությունը կազմակերպում էր կատեպանություններ, որոնցից ամենակարևորը Վասպուրականի կատեպանությունն էր Վան կենտրոնով։ Բյուզանդիան Վասպուրականին շատ մեծ կարևորություն էր տալիս, այնտեղ էին կուտակվում ստվարաթիվ զորքեր և առաքվում նշանավոր զորավարներ, որոնց նպատակն էր ամրապնդել արդեն ձեռք բերվածը և նախապատրաստություն տեսնել դեռևս իր գոյությունը պահպանող Շիրակի Բագրատունիների թագավորության նվաճման համար։ Վասպուրականը վերածվեց մի ապաստարանի բոլոր նրանց համար, որոնք Բագրատունյաց թագավորության մեջ հալածվում էին իրենց բյուզանդասիրության համար։ Նման դեր էր խաղում նաև Իբերիայի կատեպանությունը։

Բյուզանդիայի ճնշման տակ 1022 թ. Տրապիզոնում հայոց և բյուզանդացիների միջև պայմանագիր էր կնքվել, համաձայն որի Բագրատունի թագավոր Հովհաննես-Սմբատը իր թագավորությունը «կտակում էր» կայսրության։ «Անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ,— գրում է Արիստակես Լաստիվերտցին,— քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ՝ Գրէ գիր և տուր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաք և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»[24]։ Այս դեպքերի մասին ավելի հանգամանալից շարադրանք է պահպանել բյուզանդական ժամանակագիր Սկիլիցան։ «Երբ Աբխազիայի ա-

---

20 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 192։

21 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 38։

22 Ստեփանոս Տարոնեցի, էջ 278։

23 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 104։ Վասպուրականի մասին տե՛ս վերջերս լույս տեսած հետևյալ ուսումնասիրությունը. Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969։

24 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուսբաշյանի, Երևան, 1963, էջ 32։

ռաջնորդ Գեորգիոսը,— դրում է նա,— պատերազմ սկսեց հոռոմների դեմ, նրան միացավ Անիի տեր Հովհաննեսիկը։ Սակայն երբ Վասիլ կայսրը զենքով գալով Իբերիա, պատերազմ սկսեց Գեորգիոսի դեմ, հաղթեց և ոչնչացրեց նրան, Հովհաննեսիկը վախենալով կայսեր հաշվեհարդարից այն բանի համար, որ ինքը՝ Հովհաննեսիկը միացավ Գեորգիոսին, և կայսրը կարող է իրեն վնաս հասցնել, վերցնելով Անիի բանալիները, անձնապես դիմեց կայսեր, կամավոր կերպով նրան հանձնեց քաղաքի բանալիները և իրեն։ Կայսրը դրվատեց Հովհաննեսիկի ողջամտությունը, նրան շնորհեց մագիստրոսի տիտղոս և նշանակեց Անիի և Մեծ Հայքի ցմահ իշխան, նրանից գրություն ստանալով, թե նրա՝ Հովհաննեսիկի, մահից հետո նրա բոլոր տիրույթները անցնելու են Վասիլի ձեռքը և դառնալու են հոռոմների կայսրության բաղկացուցիչ մասը»[25]։

1042 թ. անժառանգ վախճանվեց Հովհաննես-Սմբատ թագավորը։ Նրա եղբայր Աշոտը, որ մի տարի առաջ էր մեռել, ուներ Գագիկ անունով տասնութամյա մի որդի, որը և ստացավ Շիրակի թագավորության դահը։ Սակայն Բյուզանդիան չմոռացավ Տրապիզոնում կնքված համաձայնությունը։ Կոստանդին Մոնոմախ կայսրը պահանջեց «իր ժառանգությունը»։ Մերժում ստանալով, հայերի դեմ նա ձեռնարկեց երկարատև և անհաջող մի պատերազմ։ Ի վերջո նենգությամբ միայն Բյուզանդիային հաջողվեց վերացնել Շիրակի թագավորությունը։

Շիրակը մինչ այդ գոյություն ունեցող Իբերիայի կատեպանության հետ կազմեց մի վարչական միավոր, որի Անիում նստող կառավարիչն սկսեց կոչվել «Անիի և Իբերիայի կառավարիչ» (τοῦ Ἀνίου καὶ τῆς Ἰβηρίας κατάρχων) կամ «Հայաստանի և Իբերիայի կատեպան» (κατεπάνω Ἀρμενίας καὶ Ἰβηρίας)։ Անին մի հենակետ դարձավ Բյուզանդիայի նորանոր նվաճումների համար, քանի որ նրա ախորժակները դեռ չէին հագեցել։ Անիի գրավման հաջորդ տարին՝ 1046 թ. Բյուզանդիան պատերազմ սկսեց Շիրակի Բագրատունիների դեմ մղած պայքարում իր նախկին դաշնակից Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ, բայց չարաչար պարտություն կրեց։ Թեև 1047 թ. կայսրությունը հաղթականորեն առաջ էր շարժվում, Դվինի ամիրայից խլելով մի շարք ամրոցներ, սակայն Բյուզանդիայում ծագած Լևոն Թոռնիկի ապստամբությունը ճնշելու համար ստիպված եղավ իր զորքերն այստեղից ետ կանչել և բավարարվել ձեռք բերածով։

* * *

Բյուզանդիան նվաճված շրջաններում սկսեց գործադրել հայ տոհմիկ ազնվականությանը բուն երկրից հեռացնելու քաղաքականությունը։ Շնորհելով բարձր պատվաստիճաններ և տիտղոսներ, ինչպես և լայնատարած կալվածներ բուն կայսրության տերիտորիայում, նրան հաջողվեց աստիճանաբար Փոքր Ասիա և Բալկաններ տեղափոխել հայ ազնվականության մի ստվար բազմություն։ Վերևում առիթ ունեցանք մատնանշել կայսրության նման քայլը Տայքի ազնվականության նկատմամբ։ Բայց դեռ դրանից առաջ, իր թագավորության հենց սկզբում Վասիլ Բ-ը, Ստեփանոս Տարոնեցու ասելով, «կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն։ Որ և տարեալ բնակեցոյց զյոլովս յաշխարհն յայն»[26]։ Ավելի պատկերավոր կերպով է նկարագրում այդ

[25] Georgii Cedreni Historiarum Compendium, t. II, Bonnae, 1839, էջ 556—557։
[26] Ստեփանոս Տարոնեցի, էջ 201։

քաղաքականությունը և դրա ավերիչ հետևանքները հայերի համար Արիստակես Լաստիվերտցին. «Ելին իշխանքն ի Հայրենի ժառանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յօտար երկիր՝ յորում աւերեցան գաւառք և գնացին յաւար տանն Յունաց։ Եղեն շինանիստ աւանք՝ բնակութիւն գազանաց, և անդաստանք նոցա՝ յարօտ երէոց։ Տունք ցանկալիք, բարձրացեղունք և մեծամեծք՝ եղեն բնակութիւնք համբարեաց և յուշկապարկաց»[27]։

Որպես կանոն Բյուզանդիան տեղում թողնում էր իրեն հավատարիմ ազնվականներին, միաժամանակ աշխատում էր նվաճված տերիտորիաներում բնակեցնել բյուզանդական ֆեոդալներին, որոնց ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը Եվստաթիոս Բոյիլասն էր[28]։

Նվաճողների հետ միասին Հայաստան մուտք զործեցին բյուզանդական կարգն ու կանոնը, բյուզանդական վարչաձևն ու ծանր հարկապահանջությունը։ Հիշելով Վասիլ Բ-ի վարչական քաղաքականության մասին Հայաստանում, Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ նա «տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց։ Եւ կացուցանէ ի վերայ նոցա զործակալս և դատաւորս և վերակացուս»[29]։ Դեռևս 1018 թ. նույն Լաստիվերտցու տվյալներով՝ «առաքէ ինքնակալ թագաւորն զնիկոմիդացի իշխան ոմն, որ եկեալ մարդահարկ արկանէ երկրիս»[30]։ Հարկահավաքների չարաշահումները, որոնք գլխավորապես կապված էին հարկերի հավաքումը կապալով տալու պրակտիկայի հետ, բնակչության արդարացի զայրույթն էին առաջացնում։ Դեպքերին ժամանակակից «Ստրատեգիկոնի» հեղինակ Կեկավմենոսը խորհուրդ է տալիս կայսեր վերջ դնել բյուզանդական պաշտոնյաների այդ չարաշահումներին, հատկապես «սահմանամերձ շրջաններում», քանի որ այդ բանը, նրա ասելով, պատճառ դարձավ բազում գավառների կորստյան և շատերի՝ թշնամու կողմն անցնելուն[31]։ Նման քաղաքականության մասին է վկայում և մագիստրոս Բագարատ Վխկացու, Արևելից կատապանի արձանագրությունը, որ փորագրված է Անիի մայր տաճարի պատի վրա[32]։

Բյուզանդական կառավարիչները և՛ Վասպուրականում, և մնացած Հայաստանում, որպես կանոն, ծագումով հույներ էին, հազվադեպ՝ բուլղարներ։ Միայն բյուզանդական տիրապետության վերջին շրջանում, երբ արտաքին վտանգը գնալով սաստկացավ, կայսրությունը կառավարիչ նշանակեց հայերից, որոնցից ամենից աչքի ընկնողը Գրիգոր Մագիստրոսն էր, որ մի թղթում իրեն անվանում է «Վասպուրականի և Տարոնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և Մօնումախին մագիստրոս, վէստ և տուկ»[33], իսկ Կեչառիսի 1051 թ. փորագրված արձանագրության մեջ նաև «կի-

---

27 Արիստակես Լաստիվերտցի, էջ 55։

28 Տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960։

29 Արիստակես Լաստիվերտցի, էջ 24։

30 Նույն տեղում, էջ 28։

31 Cecaumeni Strategicon, ed. Wassiliewsky et Jernstedt, Petropoli, 1896, էջ 28։

32 Մանրամասն տե՛ս Р. Бартикян, Эникион в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 127—128։

33 «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 213։

տոնիտ»[34], այսինքն սենեկապան։ Սա պարզ ցույց է տալիս, որ Գրիգոր Մագիստրոսը մինչ այդ Կոստանդնուպոլսում բյուզանդական կայսրերի պալատում էր ծառայել։ Բյուզանդիան օգտագործում էր նաև ծագումով հայ, բայց դավանանքով քաղկեդոնիկ հայերի, որոնցից կարելի է նշել Բագարատ Վխկացու և Գրիգոր Բակուրյանի անունները։

Սկզբնական շրջանում Բյուզանդիան պահպանեց հայկական, ինչպես և իբերական զորքերը, և դա հասկանալի է։ Այդ զորքերը կայսրությանը պետք էին նորանոր նվաճումների համար և՛ արևմուտքում, և՛ արևելքում։ Այդ զորքերը օգտագործում էր դեռևս Հովհաննես Զմշկիկը 969 թ. բուլղարների դեմ մղված պատերազմում[35]։ Բուլղարների դեմ նրանց օգտագործեց նաև Վասիլ Բ-ը[36], թեև միշտ չէ, որ նրանք հավատարիմ ծառայում էին կայսեր և ոչ հաղվադեպ լքելով նրան, անցնում էին հակառակորդի կողմը։ Տայքի Դավիթ կյուրապաղատի մահից անմիջապես հետո Վասիլ Բ-ը «հրամայէ զօրացն Զորրորդ Հայոց և Տարօնոյ՝ օգնական լինել նմա յոր պէտս և կոչեսցէ»[37]։ Վասիլի հաջորդների օրոք էլ Բյուզանդական կայսրությունը չէր հրաժարվում հայկական զինված ուժերի ընձեռած հնարավորություններից։ «Յայսմ ամի,— գրում է Մատթեոս Ուռհայեցին,— զօրաժողով արար թագաւորն Հոռոմոց Միխայիլն զամենայն աշխարհն Յունաց և այլ ի Հայոց զօրացն, որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սեբաստիա և Տարօն և ամենայն Վասպուրական. և անթիւ բազմութեամբ հասանէր թագաւորն Միխայիլ յարևմուտք և զերի առեալ զամենայն աշխարհն Գթաց»[38]։

Հայոց զինված ուժերը կայսրությունը պահպանեց նաև Անիի գրավումից հետո էլ։ Սպարապետ Վահրամ Պահլավունին իր որդու՝ Գրիգորի հետ հայոց զորքերով մասնակցեց 1046 թ. դվինյան արշավանքին ընդդեմ ամիրա Աբու-լ-Ասվարի։ Հենց այդ արշավանքի ժամանակ էլ իր որդու հետ նա սպանվեց[39]։ Սկիլիցայի տվյալներով նույն արշավանքին մասնակցում էր նաև իբերական զորքը[40]։ Սակայն իր դիրքերն ամրապնդելուց հետո կայսրությանն այլևս այդ զորքերը պետք չէին, դեռ ավելին, նրանք իր համար վտանգավոր էին։ Եվ Բյուզանդիան չհապաղեց այդ զորքերը լուծարքի ենթարկել, դրա դիմաց ստիպելով հայերին և վրացիներին նաև զինվորական հարկ վճարել[41]։

Նվաճված շրջանները, հատկապես Միջագետքն ու Հայաստանը, դավանաբանական տեսակետից միաբնակ էին։ Բյուզանդական կայսրությունը շատ հաճախ միջամտում էր հայերի և ասորիների եկեղեցական գործերին, նույնիսկ հալածանքներ էր ձեռնարկում ու ստիպում, որ նրանք ընդունեն Քաղկեդոնի դավանանքը։ Դեռ Հայաստանի լիակատար նվաճումից առաջ, 986 թ. Սեբաստիայի մետրոպոլիտը սկսել էր հայադավանների հալածանքները։ «Եւ կանացի հովիւքն և մետրապօլիտն Սեբաստիոյ,— գրում է Ստեփանոս Տարոնեցին,— սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ. և զբոնու-

34 Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 23։
35 Ստեփանոս Տարոնեցի, էջ 245։ Հմմտ. էջ 201։
36 Նույն տեղում, էջ 244։
37 Նույն տեղում, էջ 276։
38 Մատթեոս Ուռհայեցի, էջ 88։
39 Նույն տեղում, էջ 98։
40 Georgii Cedreni, t. II, էջ 559։
41 Michaelis Attaliotae, Historia, էջ 81։

թիւն ի ձեռն առեալ՝ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ, և զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին։ Եւ ի բանտի չարչարեալ զաւակն երիցանցն զԳարրիէլ սպանին... Իսկ այլք յաննշան քահանայիցն և երկու եպիսկոպոսունք Սեբաստիոյ և Լոռիսոյ, Սիօն և Յովհաննէս, ի ձեռն նոյն մետրապօլտին ընկալան զժողովն Քաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենէն Հայոց»[42]։

Սակայն պետք է ընդգծել, որ կայսրության դավանաբանական քաղաքականությունը որոշ չափով ճկուն էր և հաճախ փոխվում էր, նայած ժամանակին ու պարագաներին։ Եթե, օրինակ, նախապատրաստվում էր որևէ նոր հարձակում հայկական հողերի վրա, միաբնակների հալածանքները, որպես կանոն, դադարեցվում էին, որպեսզի այնուհետև ծավալվեն նորանոր խստությամբ։ Եթե Անիում բյուզանդական տիրապետության սկզբնական շրջանում, կատեպան Ասիտի իշխանության ժամանակ, Պետրոս կաթողիկոսը դեռևս փառք ու պատվի մեջ էր՝ հայոց պետականության անկման նախօրյակին իր ցուցաբերած բյուզանդասիրության պատճառով, ապա շատ չանցած, Կատակալոն Կեկավմենոսի կատեպանության ժամանակ դրությունը փոխվեց։ Հարցն այն է, որ հայոց պետականության անկումից հետո հայերին կենտրոնացնող և կազմակերպող գլխավոր ուժը հայոց կաթողիկոսությունն էր մնացել։ Դա ձեռնտու չէր Բյուզանդիայի համար և Կատակալոն Կեկավմենոսը շուտով վերացրեց հայոց կաթողիկոսությունը Անիում, այն տեղափոխելով Բյուզանդիային ավելի մոտ շրջան։ Հենց Կեկավմենոսն էր, որ «խաբանօք հանէ զնա (Պետրոս կաթողիկոսին—Հ. Բ.) ի քաղաքէն ասելով, եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի»[43]։ Բյուզանդիան այնտեղ էլ չէր ուզում թողած լինել Պետրոսին։ Նրան նա բերում է ավելի ապահով տեղ՝ Կոստանդնուպոլիս, որտեղ «պահեաց զնա ամս երիս, քանզի կասկածէր թողուլ ի Հայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»[44]։ Դեռ ավելին, Պետրոսի հաջորդ Խաչիկ կաթողիկոսի Կոստանդնուպոլսում եղած ժամանակ բյուզանդացիները փորձեցին հարկատու դարձնել նաև հայոց եկեղեցին անգամ։ «Լնդ հարկիւ կամէին արկանել զնա (Խաչիկ կաթողիկոսին—Հ. Բ.). իսկ նա ոչ առնու յանձն, թէ զոր մինչև յիմ ժամանակն չէ լեալ՝ և ոչ ես հաւանիմ»[45]։

Բյուզանդական տիրապետությունը Հայաստանում հանդիպում էր հայ ժողովրդի ուժեղ դիմադրության, ժողովուրդը աշխատում էր ամեն կերպ թոթափել կայսրության լուծը և վերականգնել իր անկախությունը։ Հետաքրքրական է նշել, որ երբ Բյուզանդիայում կենտրոնական կառավարության դեմ որևէ ապստամբություն էր բռնկվում, հայերն աշխատում էին մասնակցել նրան։ Վարդաս Սկլերոսը ազգությամբ հայ էր։ Նա 976 թ. ապստամբելով Վասիլ Բ-ի դեմ, հնարավոր է, նպատակ չուներ հայկական հողերն ազատագրել բյուզանդական լծից։ Նրա նպատակները, հավանաբար, այլ էին։ Բայց մենք իրավունք չունենք նրա կողմն անցած բոլոր հայերին համարել ապըստամբներ, որոնց միտքն ու նպատակը Սկլերոսին բյուզանդական գահ բարձ-

42 Ստեփանոս Տարոնեցի, էջ 201—202։
43 Արիստակես Լաստիվերտցի, էջ 63։
44 Նույն տեղում, էջ 82։
45 Նույն տեղում, էջ 83։

բացնելն էր։ Վերջինիս ապստամբությունը բռնկվեց կայսրության կողմից Կարինի, Տարոնի, Ապահունիքի և Հարքի նվաճումից շատ չանցած։ Ապստամբ Սկլերոսին կայսր հռչակեցին նախ և առաջ հայերը[46] (τῶν Ἀρμενίων καταξάντων τῆς εὐφημίας)։ Առաջին վայրը, որտեղ Սկլերոսը հաստատվեց, հայկական խարբերդ ամրոցն էր[47] (Χαρπότε)։ Ապստամբի ձեռքում էր գտնվում հայկական Միջագետքի և Զորրորդ Հայքի զգալի մասը՝ Հիսն ալ-Հ. n. d. r. s.-ը, Հովիտը՝ Տարոնից հարավ, Սասնա բերդը, Անգեղտունը, Անձիտը, Թիլ Խումը՝ Արվանայից հարավ-արևելք և Հանին[48]։ Սկլերոսը իրեն կայսր հռչակեց նախկին Զորրորդ Հայքի մայրաքաղաք Մելիտեննում[49]։ Ապստամբի կողմն է անցնում Բյուզանդիայում ծառայող հայկական հեծելազորը[50]։ Սկլերոսին են միանում Մոկքի իշխան Զափրանիկը, ինչպես և Տարոնի իշխանի որդիներ Գրիգորն ու Բագարատը[51], որոնք դրանից տասը տարի առաջ զրկվել էին իրենց տիրույթներից։ Սկլերոսի կողմն է անցնում բյուզանդական հայազգի զորավար Սահակ-Վահրամը[52]։ Ապստամբները գալիս են Լիկանդոս բանակաթեմը[53], բանակաթեմ, որ Կոստանդին Ծիրանածինի տվյալներով հիմնադրվել էր հայերի կողմից և որի բնակչությունը բացարձակապես հայերից էր բաղկացած[54]։ Սկլերոսի կողմն է անցնում Անտիոքի դուքս Վուրցիսը հայկական զորքերով[55]։ Նա գալիս է հայկական Ծամնդավ (Ἰζαμανδός) քաղաքը[56]։ Սկլերոսին է միանում նաև բյուզանդական հայազգի ծովակալ Միքայել Քուրդիկը[57]։ Մի՞թե բոլոր այս հայերի միտքն ու ձգտումը Սկլերոսին բյուզանդական գահին տիրանալուն օժանդակելն էր միայն։ Թվում է ո՛չ։ Նրանց նպատակն էր նախ և առաջ Բյուզանդիայի ձեռքն անցած հայկական շրջանների ազատագրումը, մնացած անկախ հայկական հողերի նվաճման կանխումը։ Եվ եթե ի վերա ամենայնի նկատի առնենք այն խոսուն փաստը, որ Վասիլ Բ-ը Վարդաս Սկլերոսի դեմ հավաքագրեց բացարձակապես «զզօրսն Բիւզանդիոնի և զԹրակացին և զՄակեդոնացին հանդերձ ամենայն արևմտեայ ազգօքն»[58], որոնք Սկլերոսի առաջին պարտության ժամանակ սկսեցին կոտորել գերի ընկած հայերին միայն[59], ապա մեր ենթադրությունը Սկլերոսի ապստամբության բնույթի մասին կհաստատվի։

---

46 Georgii Cedreni, t. II, էջ 419։

47 Նույն տեղում, էջ 419։

48 Մանրամասն տե՛ս M. Canard, Deux documents arabes sur Bardas Sklèros, Atti del V Congresso Internazionale degli Studi Bizantini (Studi Bizantini e Neoellenici), vol. V, Roma, 1936, էջ 60—61։

49 Ստեփանոս Տարոնեցի, էջ 191։

50 Նույն տեղում։

51 Նույն տեղում։

52 Georgii Cedreni, t. II, էջ 422։

53 Նույն տեղում։

54 Constantini Porphyrogeniti De Thematibus, Bonnae, 1828, էջ 32—33։

55 Georgii Cedreni, t. II, էջ 423—424։

56 Նույն տեղում, էջ 423։

57 Նույն տեղում, էջ 424։

58 Ստեփանոս Տարոնեցի, էջ 191։

59 Georgii Cedreni, t. II, էջ 425—426։ (πολλοὶ τῶν σὺν αὐτῷ (τῷ Βούρτζῃ) ἀπώλοντο, καὶ μᾶλλον τῶν Ἀρμενίων· παντας γὰρ τοὺς ἁλόντας τῶν Ἀρμενίων ἀπεσφαττον οἱ Ῥωμαῖοι, μὴ λαμβάνοντες οἶκτον οια το πρωτους προσχωρησαι τῷ ἀποστατῃ).

Հայերը փորձեցին ապստամբել կայսրության դեմ նաև 1051 թ.։ Չորրորդ Հայքի Պաղին գավառում նախապատրաստված ապստամբությունը դավաճանության պատճառով չբռնկվեց[60]։ Բայց Բյուզանդիայի տիրապետության դեմ մղված պայքարում մեծ դեր էին խաղում թոնդրակեցիները և հասկանալի է թե ինչու Բյուզանդիան դեռ X դարի երկրորդ կեսից սկսած կատաղի պայքար էր մղում նրանց դեմ։ Ի վերջո կայսրությանը հաջողվեց XI դարի կեսերին ճնշել նրանց շարժումը։

Կայսրության քաղաքականությունը Հայաստանում շատ կարճատես էր։ Նա սեփական ձեռքերով քանդեց այն պարիսպը, որ դարեր շարունակ կանգնած էր այլազգի հորդաների ներխուժումների դեմ։

ЗАВОЕВАНИЕ АРМЕНИИ ВИЗАНТИЙСКОЙ ИМПЕРИЕЙ

Р. М. БАРТИКЯН

(Резюме)

Со второй половины IX в., в связи с постепенным ослаблением халифата и продвижением Византии на восток и юго-восток, «армянский вопрос» вновь стал на повестку дня внешней политики империи.

Благодаря своей военной мощи и тонкой дипломатии, Византия до середины XI в. завоевала почти всю Армению, приобретшую независимость от халифата, в том числе Таронское (966) и Тайкское (1000) княжества, Васпураканское царство Арцрунидов (1021) и Ширакское царство Багратидов (1045). На завоеванных территориях Армении Византия стала проводить политику удаления из страны армянской родовой аристократии. Вместе с тем империя установила в Армении тяжелый налоговый гнет, стала вмешиваться в церковные и конфессиональные дела армян, преследовать монофизитов.

Владычество Византии в Армении встречало сильное сопротивление армянского народа, выражавшееся в открытых выступлениях против завоевателей, в борьбе против дальнейшего продвижения империи в Армению, в участии в разных восстаниях византийской военной аристократии, направленных против центральной власти, в том числе в восстании Варды Склира.

В результате такой политики империи в Армении была уничтожена организованная сила, способная противостоять нашествиям сельджуков. В 1071 г. произошло известное сражение при Маназкерте (Манцикерте), ставшее началом конца Византийской империи.

60 Մատթեոս Ուռհայեցի, էջ 109։